



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ

- ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻ ԱՄԵՆԴԱԿԱՆ ԸՆԹԻՔԸ Հ.Ս.Ը.Ս.Ի
 ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, 14 Փետրուարը Տեառնընդառաջի տօնն է, որ կը յիշատակէ Մանուկ Յիսուսի տաճար ընծայումը:

Չորեքշաբթի, 13 Փետրուարի երեկոյեան, Արեւմտեան Թեմի մեր եկեղեցիներէն ներս յատուկ արարողութիւններով ու աւանդական հանդիսութիւններով նշուեցաւ Տեառնընդառաջի նախատօնակը, որուն յաջորդեց աւանդական խարոյկի հանդիսաւոր արարողութիւնը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեանց, որոնց մասնակից եղաւ Բերիոյ Թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Ս. Սուրբէն Արք. Գաթարոյեան, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուի: Ներկայ էին նաեւ Ազգային Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝ Գերայ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, հոգաբարձութեան անդամներ, Թեմիս Երիտասարդաց խմբակի ներկայացուցիչներ եւ Հ.Ս.Ը.Ս.Ի խմբապետական կազմերն ու բազմահարիւր հաւատացեալներ:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով ներկայ հաւատացեալներուն ուղղեց իր պատգամը, որուն բնաբանն էր «Այսօր աշխարհի ցուցար լոյս, եւ փրկութիւն տիեզերաց Զրիստոս Աստուած. որ մարդասերդ ես կեցո՛ւ գմեզ»: Սրբազան Հայրը նախ ներկայացուց մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի աշխարհ գալու շարժառիթը՝ մարդոց փրկութեան համար: Ան շեշտեց, որ Աստուածորդին կամաւորաբար իր բարձրութենէն խոնարհեցաւ եւ մտաւ օրէնքին տակ, իր երկրաւոր առաքելութիւնը կատարեց՝ հետեւելով Երկնաւոր Հօր օրէնքներուն, այսպիսով մարդկութեան տուաւ աստուածային օրէնքներուն հնազանդելու գերագոյն օրինակը: Ապա Սրբազանը յիշատակեց Սիմէոն ծերունին, ըստ աւանդութեան՝ մէկը Եօթանասնից թարգմանութիւնը կատարողներէն, որ արդար մարդ ըլլալուն ու անսասան հաւատք ունենալուն շնորհիւ, խոստում ստացած էր Աստուծմէ աչքերը չփակելու, մինչեւ որ իր աչքերովը տեսնէր Տիրոջ Օծեալը՝ Փրկիչը, զԱյն ունենալու իր գրկին մէջ եւ ապա միայն ննջէր խախաղութեամբ:

Ապա Առաջնորդ Սրբազանը վեր առաւ աստուածային լոյսին կարեւորութիւնը, իբրեւ մեր կեանքերը լուսաւորող ու բարիին առաջնորդող գործօն, ընդգծելով, որ Քրիստոս աշխարհին լոյսն է ու աստուածային լոյսին տարածիչը: Սրբազան Նաեւ յիշեցուց հաւատացեալներուն, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը այս տարին հռչակած է Քրիստոնեական Դաստիարակութեան տարի, հետեւաբար, կոչ ուղղեց ծնողներուն եւ դաստիարակներուն, որ յատուկ կարեւորութիւն ընծայեն հոգեւոր դաստիարակութեան, իրենց զաւակները եւ իրենց յանձնուած մանուկները աճեցնեն հաւատքի մէջ եւ շնորհքներով: Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկայ Հ.Մ.Ը.Մ.ական սկաւառներու եւ արեւոյշներու պատասխանատուներն ու խմբապետները, եւ կոչ ուղղեց անոնց քալելու լոյսի ճանապարհէն եւ մեր ազգը առաջնորդելու լուսաւոր ապագայ:

Յուզիչ էր պահը, երբ մեր եկեղեցւոյ հաւատքին համաձայն, երիտասարդ մայրեր իրենց զաւակները Աստուծոյ կ'ընծայէին, քահանայ հայրերը, Յիսուս Մանուկի տաճար ընծայման օրինակով, հաւատացեալներու զաւակները կը դարձնէին Ս. խորանին շուրջը, մինչ կ'երգուէր պատմահայր Ս. Մովսէս Խորենացիի յօրինած Տեառնընդառաջի յատուկ տաղը՝ «Քրիստոս փառաց թագաւոր»ը:

ԽԱՐՈՅԿ

Եկեղեցական արարողութենէն ետք, հոգեւորականաց դասը, «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ դուրս եկաւ եկեղեցիէն եւ ուղղուեցաւ եկեղեցւոյ բակը, ուր տեղի ունեցաւ խարոյկի հրավառութիւնը, ներկայութեամբ ու մասնակցութեամբ Առաջնորդ Սրբազանին, հոգեւոր հայրերուն ու հաւատացեալ ժողովուրդին: Հանդիսաւոր այս արարողութեան կազմակերպումն ու կարգապահութեան հսկողութիւնը վստահուած էր Հ.Մ.Ը.Մ.ական սկաւառներուն: Ակներեւ էր խանդավառութիւնը մանաւանդ ներկայ երիտասարդներուն, որոնք գործնապէս մասնակից կ'ըլլային հաւանաբար մեր ժողովուրդին չափ հին աւանդութեան մը կատարման, ցատկելով խարոյկին վրայէն: Կիսամութ բակը կը լուսաւորուէր խարոյկին բոցով ու գայն շրջապատող հաւատացեալներուն մոմերով...

Խարոյկին շուրջ տեղի ունեցաւ երգեցողութիւն: Հոգեւոր Հայրերն ու ներկաները երգեցին ազգային հայրենասիրական երգեր: Պաշտօնական բաժինը վերջ գտաւ «Յառաջ Նահատակ», «Կիլիկիա» եւ «Մեր Հայրենիք» քայլերգով: Ներկայ հաւատացեալները մոմեր ու կանթեղներ ի ձեռին ուղղուեցան տուն, մեր դարաւոր աւանդութեանց ու քրիստոնեական հաւատքին լոյսը տանելով իրենց հետ:

ԸՆԹԻՔ

Չոյգ արարողութիւններէն ետք, Առաջնորդ Սրբազանը, հոգեւորականաց դասու անդամները, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները, Հոգաբարձութեան անդամները, Հ.Մ.Ը.Մ.ի խմբապետները եւ Թեմիս երիտասարդաց խմբակներու ներկայացուցիչները

համախմբուեցան եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահը, ուր տեղի ունեցաւ սիրոյ սեղան, հիւրընկալութեամբ եկեղեցւոյ հոգաբարձութեան: Հանդիսավարն էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տէմիրճեան:

Մթնոլորտը մտերմիկ էր ու գօտեպնդող: Կատարուեցան խմբային երգեր: Յանուն Հ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան խօսք արտասանեց Քոյր Մարօ Քէշիշեան, իսկ Հ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբայր Հրայր Պոյաճեան ներկաները ողջունեց եւ շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, որ այս գեղեցիկ առիթը ընծայած էր իրենց: Ապա ան ներկայացուց խմբապետները եւ շրջաններու ներկայացուցիչ սկաուտներն ու արեւոյշները: Արեւմտեան Թեմի Երիտասարդաց Յանձնախումբի ատենապետ Տիար Րաֆֆի Նալճեան իր կարգին ներկայացուց Թեմիս երիտասարդական խմբակները եւ ծաւալուող գործունեութիւնը:

Խօսք առաւ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, որ հակիրճ կերպով ներկայացուց Տեառնընդառաջի տօնին խորհուրդը, անոր կապուած աւանդութիւններն ու մեր ժողովուրդի նախաքրիստոնեական դարերէն ի վեր պահպանուող այն բարքերը, որոնք որդեգրուած են յետ քրիստոնեացման:

Յանուն Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան սրտի խօսք արտասանեց Տիար Ժիրայր Ղարախանեան, որ շնորհակալութիւն յայտնեց այս սքանչելի միախմբումին համար եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատելց Հ.Ս.Ը.Մ.ական սկաուտներն ու խրախուսեց գանոնք, շէշտելով Հ.Ս.Ը.Մ. եւ Արեւմտեան մեր Թեմի սերտ գործակցութիւնը, որովհետեւ երկու նուիրական այս հաստատութիւններուն նպատակն է եղած հայ երիտասարդին մէջ պատրաստել լաւ Քրիստոնեան եւ իսկական ազգայինը:

Աւարտին՝ Առաջնորդ Սրբազանը ներկաներուն յանձնեց յուշանուէրներ, ապա, երեկոն փակուեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի քայլերգին խմբերգումով եւ «Պահպանիչ» աղօթքով:

EVE OF THE FEAST OF THE PRESENTATION OF OUR LORD CELEBRATED AT ST. MARY'S CHURCH

On the evening of Wednesday, February 13th, the eve of the Feast of the Presentation of our Lord to the Temple was celebrated in Prelacy Churches with special services and the traditional bonfire.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the service and delivered the sermon at St. Mary's Church in Glendale. Participating in the service was former Prelate of the Aleppo Diocese H.E. Archbishop Souren Kataroyan, Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, parish priests, and hundreds of parishioners. Also in attendance were members of the Board of

Trustees and youth groups, as well as Homenetmen Regional Executive members and scouts.

The Prelate began his sermon by speaking of the earthly mission of our Lord Jesus Christ which was to bring salvation to mankind. By humbly carrying out His ministry in accordance with the commandments of God, Jesus became the role model for obedience to God. The Prelate also spoke of Simeon the Just who, for being a virtuous man of great faith, had received a promise by God that he would see the Savior with his own eyes before his death. Once he saw Jesus, he prayed to God to take his soul since there would be no greater blessing in life than seeing and carrying the Savior in his arms. The Prelate concluded by emphasizing that Jesus is the Divine light and illuminator of our lives and urged the parishioners and especially the young scouts, to follow in the path of Light and to lead our people to a bright future. Following in the example of Jesus being presented to the temple, mothers then presented their own children to the priests who carried them around the altar.

Following the service, clergy and faithful headed to the church courtyard where the traditional bonfire was lit and around which nationalistic songs were sung. After the festivities around the bonfire, a reception was hosted by the parish Board of Trustees at the "Armenag Der Bedrossian" Hall for the Prelate, clergy members, Homenetmen Regional Executive, scout leaders and scouts, and youth group members. Remarks were offered by Maro Keshishian on behalf of the Homenetmen Regional Executive and by Hrair Boyajian, Chair of the Homenetmen Scouting Council, who thanked the Prelate for the occasion and introduced the scout leaders and representatives from each region. The activities of the youth groups was presented by Raffi Naljian, Chairman of the Armenian Church Youth Association Central Board, followed by a brief presentation by Very Rev. Fr. Muron Aznikian on the meaning of the Feast and the traditions associated with it.

Remarks were also offered on behalf of the St. Mary's Board of Trustees by Mr. Jirayr Gharakhanian who expressed thanks for the opportunity to assemble together and wished success to all in attendance.

Concluding remarks were made by the Prelate who offered his commendation and encouragement of the scouts and presented them with mementos. The evening came to a close with the Prelate's benediction and the singing of the Homenetmen anthem.